

ԿԱՐԳ

ՀՀԱԱ-Ի ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱԶԱՏՈՒՄՆԵՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ

1. Սույնով կանոնակարգվում են ՀՀԱԱ հաշվապահի և/կամ աուդիտորի որակավորման ծրագրի մասնակցին (այսուհետ՝ մասնակից) որակավորման քննությունից (այսուհետև՝ Քննություն) ազատելու հետ կապված հարցերը:
2. Ազատումներ շնորհվում են՝
 - ա) ACCA անդամներին՝ ՀՀԱԱ որակավորման ծրագրի բոլոր քննություններից.
 - բ) ACCA առանձին քննություններ հանձնած մասնակցին՝ ՀՀԱԱ Կրթության և որակավորման հանձնաժողովի որոշմամբ, հաշվի առնելով հանձնած քննությունների, ինչպես նաև ACCA-ի կողմից հանձնածին համարժեք ճանաչված (այսինքն՝ ազատում տված) առարկաների համարժեքությունը և համապատասխանությունը ՀՀԱԱ որակավորման ծրագրի քննական առականներին.
 - գ) Տնտեսագիտության գծով դոկտորի կամ գիտության թեկնածուի գիտական աստիճան ունեցողին՝ ՀՀԱԱ որակավորման ծրագրի համապատասխանաբար առաջին չորս և առաջին երկու քննություններից, պայմանով, որ գիտական աշխատանքները պաշտպանված լինեն հաշվապահական հաշվառման և աուդիտի գծով:
3. ՀՀԱԱ որակավորման ծրագրի առաջին 4 առարկաներից (մի քանիսից կամ բոլորից) ազատումներ կարելի է շնորհել 27 տարին լրացած բարձրագույն կրթություն (մագիստրոսի աստիճան կամ հինգամյա բարձրագույն կրթություն) ունեցող այն անձանց, ովքեր ունեն աուդիտորի կամ հաշվապահի 6 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ, որից առնվազն 3 տարին պետք է զբաղեցրած լինեն ստորև թվարկված պաշտոններից որևէ մեկը՝
 - ա) խոշոր կազմակերպության («Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով սահմանված իմաստով խոշոր համարվող կազմակերպության) ֆինանսական տնօրեն, գլխավոր հաշվապահ կամ գլխավոր հաշվապահի տեղակալ, կամ

- բ) աուդիտորական կազմակերպությունում մենեջեր կամ ավելի բարձր պաշտոն, կամ
- գ) խոշոր կազմակերպություններին հաշվապահական ծառայություններ մատուցող կազմակերպությունում մենեջեր կամ ավելի բարձր պաշտոն:

3.1. Սույն կարգի 3-րդ կետով նախատեսված մասնագիտական աշխատանքային փորձի մեջ հաշվի չի առնվում բակալավրիատում կամ հնգամյա ուսումնառության ընթացքում ձեռք բերած ստաժը (մասնագիտական աշխատանքային փորձը), իսկ ցերեկային մագիստրատուրայում, ոչ լրիվ ծանրաբեռնվածությամբ (ոչ լրիվ աշխատանքային օրով), ինչպես նաև համատեղությամբ աշխատելու ժամանակահատվածում ձեռք բերված ստաժի տևողությունը հաշվարկելիս կիրառվում են կուտակված ստաժը արդյունավետ օրվան համապատասխանեցնող գործակիցներ՝ այնպես, որ հաշվի առնվեն միայն համապատասխան պաշտոնում փաստցի աշխատած ժամերը:

4. Ազատումներ շնորհող մարմինը

- 4.1. Քննությունից ազատող մարմին է հանդիսանում ՀՀԱԱ կրթության և որակավորման մասնագիտական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով):
- 4.2. Ազատումների հետ կապված աշխատանքի կազմակերպումը ապահովվում է ՀՀԱԱ գործադիր տնօրինության կողմից:

5. Ազատումների շնորհման գործընթացը

- 5.1. Քննությունից ազատում հավակնող Մասնակիցը ներկայացնում է Քննությունից ազատումներ շնորհելու մասին հայտ՝ Սույն կարգի Հավելված 1-ում բերված ձևով: Հայտին պետք է կցվեն ազատումների համար սույն կարգի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված պայմանների բավարարումը հիմնավորող փաստաթղթեր՝ ACCA-ին անդամ լինելը կամ քննություն(ներ)ը հանձնած լինելը, կամ քննությունները ազատում ստացած լինելը, բարձրագույն կրթություն ունենալը և համապատասխան աշխատանքային փորձառություն ունենալը (ներառյալ՝ ոչ ակնհայտ դեպքերում՝ կազմակերպության խոշոր լինելը) հավաստող փաստաթղթերը:
- 5.2. Առաջին չորս առարկաներից մեկից կամ մի քանիսից ազատելու կամ չազատելու վերաբերյալ վերջնական որոշումը կայացնում է ՀՀԱԱ կրթության և որակավորման հանձնաժողովը՝ հարցազրույցի հիման վրա: Հարցազրույցի առարկա, մասնավորապես, կարող է լինել այն, թե տվյալ անձն ինչպիսի փաստացի փորձառություն ունի (ոչ թե պաշտոնի ֆորմալ անվանումը, այլ կատարած գործառնություն ըստ էության և դրա ընդգրկումն ու ինտենսիվությունը՝ ազատման

ենթակա առարկայի բովանդակությունը ծածկելու տեսանկյունից) և որքանով է տեղյակ մասնագիտության արդի զարգացումներին և կարգավորումներին:

- 5.3. Սույն կարգի 3-րդ կետում նշված հիմքով որևէ առարկայից ազատելու կամ չազատելու վերաբերյալ իր որոշման մեջ Հանձնաժողովը շարադրում է ընդունված որոշումն հիմնավորող եզրահանգումները:
- 5.4. Ստացված հայտերը քննարկվում են հանձնաժողովի առաջիկա նիստում:
- 5.5. ՀՀԱԱ գործադիր տնօրինությունը Մասնակցի հայտը ստանալուց 15 օրվա ընթացքում պատրաստում է հայտին կից ներկայացված փաստաթղթերի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն, որը թույլ է տալիս գնահատել ՀՀԱԱ որակավորման ծրագրի և Մասնակցի փաստաթղթերում ներկայացված որակավորման, կրթության և այլ տվյալների համապատասխանությունը:
- 5.6. Մասնակցին ազատումներ շնորհելուց հետո, Մասնակիցը 20 օրվա ընթացքում վճարում է Քննության մասնակցության վճարը՝ ազատումը շնորհելու պահին գործող չափով:
- 5.7. Որակավորման ծրագրի մասնակցին ազատում շնորհված յուրաքանչյուր առարկայի համար մասնակցի կողմից ենթակա է վճարման ազատման վճար՝ ազատում շնորհելու պահին գործող քննության մասնակցության վճարի չափով, բացառությամբ սույն կարգի 2-րդ կետի «ա» ենթակետում նշված հիմքով ազատումների դեպքի, երբ ազատման վճարը սահմանվում է քննության մասնակցության վճարի կեսի չափով: Ազատման վճարը վճարված չլինելու դեպքում ազատումն անվավեր է:
- 5.8. ՀՀԱԱ գործադիր տնօրինությունը, հիմք ընդունելով Հանձնաժողովի որոշումը և Քննության մասնակցության վճարը վճարված լինելը, ազատումների վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը գրանցում է ՀՀԱԱ որակավորման ծրագրի մասնակիցների տվյալների բազայում և Մասնակցի անհատական թերթիկում:
- 5.9. ՀՀԱԱ որակավորման Քննությունից ազատումը հավասարազոր է ՀՀԱԱ որակավորման տվյալ քննությունից անցողիկ միավորով հանձնած քննությանը:

Հավելված 1

ՀՀԱԱ-ի որակավորման քննություններից ազատումներ շնորհելու կարգի

ՀԱՅՏ ՀՀԱԱ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ

Ես՝ -----ու

/անուն ազգանուն հայրանուն/

գրանցվել եմ որպես ՀՀԱԱ որակավորման ծրագրի մասնակից և սույնով ներկայացնում եմ հայտ՝ ՀՀԱԱ որակավորման ծրագրի ստորև նշված քննություն(ներ)ից ազատում ստանալու նպատակով.

1. _____
2. _____
3. _____
4. _____
5. _____
6. _____
7. _____

Կից ներկայացնում եմ հետևյալ փաստաթղթերը՝

1. _____
2. _____
3. _____
4. _____
5. _____
6. _____

Ներկայացված փաստաթղթերի իսկությունը հավաստում եմ, որի համար ստորագրում եմ՝

Ստորագրություն

Անուն Ազգանուն

Ամսաթիվ